նրանք, դու էլ պէտք է այստեղ մեռնես եւ քո ոսկերքը խառնես նրանց ոսկերքի հետէ:

Վանայ բերդի պարսպաքարերի վրայ եւ Վասպուրականի մէջ՝ բլուրների գագաթին՝ հայը տեսնում էր անթիւ արձանագրութիւններ, իրանց սեպաձեւ բեւեռագրերով, որոնք հազարաւոր տարիներ պատերազմելով ժամանակի հետ, պահել էին հայոց հին, շատ հին թագաւորների յիշատակարանները: Այն անբարբառ եւ խուլ նշանագրերի մէջ հայը կարդում էր իր վաղեմի մեծութիւնը:

Նոյն երկրում հայը դեռ չէր մոռացել իր հին աստուածներին, որոնց հետ այնքան շատ դարեր ապրել էր նա միշտ հաշտ կերպով, որոնց նուիրել էր իր զոհերը, որոնցից խորհուրդներ եւ պատգամներ էր հարցրել իր գործերի մասին:

Դեռ Աստղիկը, Աշտիշատի գեղեցիկ դիցուհին, իր վաղեմի սովորութեան համեմատ, ամէն օր վաղ առաւօտեան, լողանում էր Մուրադ գետի (Եփրատի) ալիքների մէջ:

Նոյն ժամուն հայոց երիտասարդ դիւցազունները հաւաքւում էին Տաղոնաց սարի գլխին, այնտեղից գաղտնագողի կերպով դիտելու գեղեցիկ աստուածուհու մարմինը: Բայց Աստղիկը Մշու դաշտի ամբողջ երեսը եւ նրա լեռները պատում էր թանձր մշուշով, եւ անթափանցիկ օդեղէն վարագոյրները անտեսանելի էին կացուցանում նրա լոգարանը անհամեստ աչքերից: Դեռ Արշակայ ծովակի մէջ բնակւում էին հայոց ջրային յաւէրժահարսունքը: Եւ հայ պատանին, լի ախտաբորբոք կրքերով լուսնկայ գիշերներում թափառում էր լճի ափերի մօտ «հրեղէն աղջիկներէ որսալու համար: Դեռ հայոց ամենահին եւ ծերունի աստուածը — Արեգը – հրային-լուսափայլ ճաճանչներով, ամէն գիշեր հանգստանում էր Վանայ ծովակի մէջ, որի յատակի վրայ դրած էր նրա ոսկեղէն անկողինը: Այնտեղ Հրային կոյսեր իրանց գողտրիկ երգերով անուշցնում էին ցերեկոյայ յոգնած լուսատոի քունը: Դեռ Լեզք կոչուած բլուրի վրայ ապրում էին Յարալէզ դիք, որոնք լիզելով կեանք էին շնորհում պատերազմի դաշտում ընկած հայոց քաջերին:

Այն երկրում, Հայոց ձորով անցնելու ժամանակ, հայը միշտ յիշում էր իր նախահոր – Հայկ դիւցազնի, այն մեծ հսկայի կռիւը տիտանների հետ: Ցոյց էր տալիս իր զաւակներին Նամրութայ սարը, ուր մեր Հայկ պապը վեր հանեց Նեբրովթի դիակը, նրան սպանելեն յետոյ: Եւ իր աշխարհին ցոյց տալու համար գոռոզ վիթխարիի ամբարտաւանութիւնը, նոյն սարի բարձրութեան վրայ մեխեց նրա դիակը եւ յետոյ այրեց նրան: Մինչեւ այսօր մնում են նոյն սարի մօտ Նեբրովթայ քարաւանի ուղտերը, երկար քարացած շարքերով,